ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-47/24-I/ԱԵՐՀ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Հայկական հանրագիտարան հրատարակչություն» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Հովհաննես Մնացականի Այվազյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 29 341 000 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 29 341 000 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա	**Կազմակերպություն**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ «Հայկական հանրագիտարան հրատարակչություն» ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 Հ/հ՝ 900011024115 ՀՎՀՀ՝ 00005673 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	Գր. Լուսավորիչ 15 Հ/հ՝ 900018005430 ՀՎՀՀ՝ 02502668 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝ (ստորագրություն) ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ Կ. Տ.	Կազմակերպության տնօրեն՝ (ստորագրություն) Հովհաննես Մնացականի Այվազյան Կ. Տ.
Ծրագրի գիտական ղեկավար՝ (ստորագրություն)	Այվազյան Հովհաննես Մնացականի

Հավելված 1
29 հունվարի 2024թ.
N 1-47/24-I/AEPH պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Հովհաննես Մնացականի Այվազյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-47/24-I/AEPH պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 29 341 000 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահ՝

(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ

Կ. Տ.

Կազմակերպություն

տնօրեն՝

(ստորագրություն)

Հովհաննես Մնացականի Այվազյան

Կ. Տ.

Հավելված 2
29 հունվարի 2024թ.
N 1-47/24-I/ԱԵՊՀ պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	0
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	0
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	0
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	0
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	0
Գրքեր, մենագրություններ՝	0
Գիտաժողովի նյութեր՝	0
Արտոնագրեր՝	0

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Հովհաննես Մնացականի Այվազյան

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ (ստորագրություն) Գուլակյան հասմիկ

Կ. Տ.

Հավելված 3
29 հունվարի 2024թ.
N 1-47/24-Ի/ԱԵՊՀ պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

հազ. դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	26 235 708	5 247 141	6 558 927	6 558 927	7 870 713
2.	տնտեսական ծախսեր՝	2 000 000	400 000	500 000	500 000	600 000
3.	այլ ծախսեր՝	1 105 292	221 058	276 323	276 323	331 588
Ընդամենը՝		29 341 000	5 868 199	7 335 250	7 335 250	8 802 301

Կազմակերպության տնօրեն՝ _____ Հովհաննես Մնացականի Այվազյան
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ Մելիտա Ներսեսի Դավթյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 3.1
29 հունվարի 2024թ.
N 1-47/24-Ի/ԱԵՊՀ պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**2 000 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	1 100 000
2.	*գազի ծառայություն*	0
3.	*ջրամատակարարման ծառայություն*	144 000
4.	*կապի ծառայություն*	720 000
5.	*աղբահանություն*	36 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**1 105 292**
1.	Հոնորար	1 000 000
2.	Այլ ծախսեր	105 292

Կազմակերպության տնօրեն՝ _____ Հովհաննես Մնացականի Այվազյան
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ Մելիտա Ներսեսի Դավթյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 4
29 հունվարի 2024թ.
N 1-47/24-Ի/ԱԵՊՀ պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)

B - ամիսների քանակ

C - աշխատաժամանակի ռեժիմ

D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)

E - գումարային

շշ դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչապետարկող անձնակազմ						
Այվազյան Հովհաննես Մնացականի	տնօրեն-գլխավոր խմբագիր	220 000	12	հիմնական	8	2 640 000
Գուլակյան Հասմիկ Վլադիմիրի	Պատասխանատու քարտուղար	143 000	12	հիմնական	8	1 716 000
Դավթյան Մելիտա Ներսեսի	Գլխավոր հաշվապահ	121 000	12	հիմնական	4	1 452 000
Գևորգյան Էլմիրա Ռուբենի	ավագ հաշվապահ	95 625	12	հիմնական	8	1 147 500
Խաչատրյան Լալա Սահակի	կադրերի տեսուչ	32 812	12	հիմնական	4	393 744
Գրիգորյան Մարինե Սաշայի	ռեֆերենտ-գործավար	125 000	12	հիմնական	8	1 500 000
Այվազյան Վահե Հովհաննեսի	Տնօրենի աշխատակազմի ղեկավար	115 000	12	հիմնական	8	1 380 000
Սահակյան Սահակ Ռուբենի	Ավագ գիտաշխատող	95 625	12	հիմնական	8	1 147 500
Խանիկյան Էսթեր Ասիկոյի	ավագ գիտխմբագիր	95 625	12	հիմնական	8	1 147 500
Մարգարյան Էլմիրա Գրիշայի	ավագ գիտխմբագիր	110 000	12	հիմնական	8	1 320 000
Մաթևոսյան Լուսինե Ալբերտի	սրբագրիչ	62 812	12	հիմնական	4	753 744
Առաքելյան Լուիզա Եգորի	ավագ գիտխմբագիր	95 625	12	հիմնական	8	1 147 500
Միքաելյան Օֆելյա Դավթի	ոճաբան	47 812	12	հիմնական	4	573 744
Սարգսյան Ժանետա Վարազդատի	գիտխմբագիր	47 812	12	հիմնական	4	573 744
Դրացյան Գայանե Լևոնի	սրբագրիչ	47 812	12	հիմնական	4	573 744
Դուրգարյան Շուշանիկ Հայկի	սրբագրության բաժնի վարիչ	104 000	12	հիմնական	8	1 248 000
Ղազարյան Աննա Սերյոժայի	Համակարգչային բաժնի վարիչ	126 500	12	հիմնական	8	1 518 000
Բեյբության Մարինե Համբարձումի	էջկապի օպերատոր	72 812	12	հիմնական	4	873 744
Յայլոյան Անահիտ Ապետի	համակարգչային օպերատոր	95 625	12	հիմնական	8	1 147 500
Աղամալյան Գայանե Արամի	շարվածքի արաջատար օպերատոր	67 812	12	հիմնական	4	813 744
Այունց Մարինե Ռաֆիկի	համակարգչային օպերատոր	104 000	12	հիմնական	8	1 248 000
Թադևոսյան Սամվել Օնիկի	էլեկտրիկ	80 000	12	հիմնական	6	960 000
Հակոբյան Ջուլիետա Գևորգի	մաքրուհի	80 000	12	հիմնական	8	960 000

Գիտական անձնակազմ	
Բաժին բաժին	
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝	0
Ընդհանուր գումար՝	26 235 708

Կազմակերպության տնօրեն՝ _____ Հովհաննես Մնացականի Այվազյան
(ստորագրություն)

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝ _____ (ԱԱՀ)
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N 6
«29» հունվարի 2024 թ.
N 1-47/24-11ԱՀ-24 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Հանրագիտական գրականության պատրաստում և հրատարակում» ծրագրի

(ծրագրի անվանումը)

հ/հ	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1.	«Հայաշխարհ» հանրագիտարանի հոդվածների պատրաստում	Եզրույթ-տերմինների լրացում, հոդվածների պատրաստում	Տեքստի թվային տարբերակի պատրաստում	ամբողջ տարի
2.	Հեղինակային հոնորար	Եզրույթ-տերմինների լրացում, հոդվածների պատրաստում	Տեքստի թվային տարբերակի պատրաստում	

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Հովհ. Այվազյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Հովհ. Այվազյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

---

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:*